ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լոգոպեդի , մեթոդիստի, երաժշտության դաստիրակի թափուր տեղի մրցույթի հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.34 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ***լոգոպեդի /1,0 դրույք/, մեթոդիստի /0,25 դրույք/, երաժշտության դաստիարակի /0,5դրույք/*** թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,
- կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 4),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ

կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. նոյեմբերի 06-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 03 -ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. դեկտեմբերի 10 -ին՝ **ժամը 11:00-ին**, «Երևանի հ.34 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում,, հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռ, Շրջանցիկ թունել:

Տեղեկությունների համար զանգահարել /096/020745 հեռախոսահամարով: